տէրն ևս ոչ գիտացեալ թէ ո՛վ ոք է, այլ թէ մուսաֆիր ոմն ասացաւ ի ծանօթից ոմանց, որ օր ամսոյ էր Նոյեմբեր ԺԸ (Եշէ)։

Եւ յառաջ քան զգալուստ Վարդապետին տասն և հինգ աւուրքք, որ Նոյեմբեր Գ Դշի[1]) աւուր փոխեցաւ ի Քրիստոս Մահտեսի Ամբակումն որ էր քեռի մօր մերում։ Եւ էր նա ի գիւղէն Նավրերոյ Յական գաւառի, որդի Մարտիրոսի ումեմն մեծազնոյ։ Եւ էր անձամբն երկայն եւ վայելուչ հասակաւ եւ փափկամարմին, բայց բնաւ մազ մօրուաց ոչ ունէր և ոչ մի։ Եւ ի ժամանակին սովոյ յարարմանց ճէլալոց բազում տեղիք աւերեալք լինէին և շատ մայրք զմանկունս իւրեանց ուտել ասացին. և զի՛նչ որոնես՝ եթէ զաղբս և զմէզս անասնոց ուտել կամ ըմպել, և զո՛ր խնդրես ի լերինս և յանապատս[2]) գազանաբեկ լինել։ Թողեալ զհայրենիս ի փախուստ գառնային և յերկրէ յերկիր և յաշխարհէ յաշխարհ ցրուէին. յայտնիք այսոքիկ որք երևին, իսկ աներևոյթքն Աստուծոյ են գիտելի, որ էր յաւուրս բռնակալութեան Տաճկաց Սուլթանին Մահմէտի, որ նստեալ էր թվին ՌԽԳ ի զօրանալն ճէլալոց։ Եւ այրս այս Ամբակում հարբ իւրով գայ ի տունս Հռոմաց և աճեալ ի հասակ մտանէ ի հացագործութիւն և յաջող ի գործին՝ պետ լինի արհեստին և մեծ անուամբ։ Եւ մտեալ ի կարգ աշխարհի, ոչ լեալ զաւակ սորա ըստ մարմնոյ, բայց ծնանի բազում ըստ հոգոյ և ըստ Աստուծոյ։ Քանզի սիրեցեալ լինէր զկարգաւորս և տայր յամենայն ընչիցն բաժին Աստուծոյ. պատուէր զծնօղս, հարկէր զազգատոհմս, գթայր ի վերայ որբոց, խնամս տանէր այրեաց, զբանտարգեալս ազատէր, զանկարիսն ի կար ածէր՝ յոյր

1) Զշի. 2) յանապատաս.